ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆԻ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր՝
Հարությունյան Դավիթ Վլադիմիրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝
Միրզոյան Նարինե Էռնեստի

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի մայիսի 26-ին՝ ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան փող. 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի ապրիլի 14-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ **Ա.Հ. Հակոբջանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ներդրումների ներգրավումը հանդիսանում է զարգացող և զարգացած երկրների արտաքին տնտեսական քաղաքականության անբաժան մասը: Այդուհանդերձ վերջին շրջանում Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները մասնագետների մի մասի մոտ խիստ մտահոգություններ են առաջացնում առ այն, որ մոտ ապագայում ՀՀ-ն դժվար թե կարողանա ներդրումների ներգրավման արդյունավետ քաղաքականություն վարել: Սակայն, պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանը միակը չէ, որ տուժել է պատերազմից: Պատմությանը հայտնի են Ճապոնիայի, Սինգապուրի և այլ երկրների օրինակները, որոնք տուժելով պատերազմից և ունենալով գրեթե ամբողջությամբ քայքայված տնտեսություն, կարողացել են արդյունավետ տնտեսական քաղաքականության շնորհիվ կառուցել աճող տնտեսություն և կարողացել են մոտավորապես հիսուն տարում մի շարք ցուցանիշներով դառնալ աշխարհի առաջատար երկրներից մեկը:

Միջազգային փորձը վկայում է, որ ճգնաժամային իրավիճակում հայտնված և հատկապես՝ փոքր տնտեսություն ունեցող երկրները սովորաբար ներքին ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով ավելի արագ աճի կարողանում են հասնել օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: Հայաստանի տնտեսության ներկայիս վիճակի արդարացի գնահատումը ստիպում է, որպեսզի փաստենք հետևյալ իրողությունները.

- ՀՀ տնտեսությունը բազմիցս տուժել է տնտեսական և ոչ տնտեսական բնույթի ճգնաժամերից,
- Հայաստանի ՀՆԱ-ի հիմնական մասը ստացվում է ծառայությունների ոլորտից: Սա, թերևս բնականոն երևույթ է և հարկ չէր լինի դրան անդրադարձ կատարելու, եթե մյուս ոլորտները ևս համապատասխան զարգացման մակարդակ ունենային,
- Հայաստանի գյուղերի և գյուղատնտեսության զարգացումը ունի խիստ արդիականացման կարիք,
- ՀՀ-ում արդյունաբերության զարգացման մակարդակը ցածր է,
- Հայաստանը չունի պետական բանկեր, որոնց միջոցով կկարողանա վարկավորել այս կամ այն ներդրումային նախագիծը,
- ՀՀ ներքին ֆինանսական ռեսուրսները բավարար չեն վերոնշյալ խնդիրները լուծելու համար,
- Արտաքին ֆինանսական աղբյուրները՝ փոխառությունների տեսքով առկա են, սակայն դրանցից օգտվելու պարագայում կմեծանա առանց այդ էլ մեծ չափերի հասնող արտաքին պարտքը:

Վերոնշյալ փաստերի համադրման արդյունքում սխալված չենք լինի, եթե ասենք, որ ներկայում ՀՀ տնտեսության զարգացման համար հատկապես՝ իրական հատվածում, ներդրումների ներգրավումը գրեթե չունի այլընտրանք: Հասկանալի է, որ ներդրումների ներգրավման ուղղությամբ վարվող տնտեսական

քաղաքականությունից զատ զգալի ազդեցություն ունի նաև երկրի քաղաքական և ռազմական վիճակը: Այնուամենայնիվ ինչպես արդեն նշեցինք աշխարհում հայտնի են այլ երկրներ, որոնք պատերազմից հետո կարողացել են թռիչքաձև աճ գրանցել՝ ներդրումների ներգրավման շնորհիվ: Այդ պատճառով շատ կարևոր է ճգնաժամային վիճակից դուրս գալու նպատակով ներդրումների ներգրավման միջազգային փորձի հնարավորինս լայն գործիքակազմի ուսումնասիրությունը և Հայաստանում դրանց տեղայնացման եղանակների առաջադրումը:

Վերոնշյալ բոլոր փաստերը հիմնավորում են ընտրված թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է վերլուծել ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմյան Հայաստանում և առաջարկել ՀՀ ներդրումային գրավչության աճին ուղղված քայլեր՝ ինչպես ներդրումային գրավչություն ունեցող ոլորտների բացահայտման, այնպես էլ ներդրումային քաղաքականության գործիքակազմի մշակման միջոցով:

Այդ նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- քննարկել ներդրումնարի ներգրավման հիմնական տեսությունները՝ ներկայացնելով դրանց օրինաչափություններն ու բացթողումները,
- մասնագիտական գրականության և տարբեր հեղինակների կողմից կատարված հետազոտությունների համադրման արդյունքում վեր հանել ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ներգրավման վրա ազդող հիմնական գործոնները,
- բացահայտված գործոնների միջոցով համեմատական վերլուծություն իրականացնել Հայաստանի, հարևան և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրերի համար՝ բացահայտելով ՀՀ ներդրումային դաշտի բացթողումները,
- վերլուծության ենթարկել ՀՀ ՕՈՒՆ դինամիկան և կառուցվածքը՝ բացահայտելով առկա խնդիրները,
- էկոնոմետրիկ գործիքակազմի միջոցով հաշվարկել ՕՈՒՆ ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա և պարզել ՕՈՒՆ և ՀՆԱ-ի միջև պատճառական կապի առկայությունը կամ բացակայությունը,
- բացահայտել ՀՀ տնտեսության ներդումային գրավչություն ունեցող ոլորտները՝ փաստաթղթային ստուգման և տարբեր ինդեքսների հաշվարկման հիման վրա,
- վերլուծել ՀՀ-ում վարվող ներդրումային քաղաքականությունը՝ վեր հանելով դրանում առկա սխալներն ու բացթողումները,
- մշակել հետպատերազմյան Հայաստանում ներդրումների ներգրավմանն ուղղված ռազմավարական քայլերի համախումբ, որը կներառի մինչ այդ արձանագրված խնդիրների լուծման գործիքակազմ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել ներդրումների ներգրավման գործընթացները, իսկ առարկա՝ դրան ուղղված գործիքակազմի մշակումը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը: Հետազոտության համար տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական

հիմք են հանդիսացել հայ և օտարերկրյա գիտնականների կողմից մշակված վերլուծությունները, տարբեր հեղինակների գիտական հոդվածներն ու միջազգային գիտաժողովների նյութերը, միջազգային կազմակերպությունների հետազոտությունները, ինչպես նաև այս թեմայով պաշտպանած ատենախոսությունները: Ներդրումների ներգրավման հիմնախնդրում իրենց զգալի ավանդն են ունեցել ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա գիտնականներն ու վերլուծաբանները, մասնավորապես՝ Վ.Բոստանջյանը, Լ.Սարգսյանը, Ք.Բաղդասարյանը, Մ.Հեյդարին, Ֆ.Միշկինը, Ջ.Գիտմանը և այլք:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տվյալներն ու հրապարակումները, միջազգային փորձագետների կարծիքները, ինչպես նաև էլեկտրոնային շտեմարանների նյութեր:

Ատենախոսության շրջանակներում կատարվող հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման, վերլուծության և մշակման, սոցիոլոգիական հարցման, մաթեմատիկական մոդելավորման և այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները: Ատենախոսությունում ստացվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

- Բազմագործոն ռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ բացահայտվել է Հայաստանի Հանրապետությունում ՕՈՒՆ-երի ազդեցության գործակիցը ՀՆԱ-ի աճի ձեռքբերման գործում, ինչպես նաև ցույց է տրվել ՕՈՒՆ-երի և ՀՀ ՀՆԱ-ի միջև առկա պատճառական կապը: Ըստ այդմ՝ տվյալ ժամանակահատվածում ՕՈՒՆ ներհոսքի փոփոխությունը պատճառ է հանդիսանում հետագա 6 ամիսների ընթացքում ՀՆԱ-ի փոփոխության, իսկ տվյալ ժամանակահատվածում ՕՈՒՆ-ի միավոր աճը նպաստում է ՀՀ ՀՆԱ-ի աճին 1,56 միավորով:
- Մշակվել են հետպատերազմյան Հայաստանում ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլեր, որոնք բաղկացած են 3 համախմբից՝ 1.մեթոդական գործիքակազմ, որը պետք է հաշվի առնվի ՀՀ ներդրումների ներգրավման ռազմավարություն մշակելիս, 2. ներկայում ՀՀ-ում ներդրումային քաղաքականության իրականացման ընթացքում թույլ տված սխալների և թերացումների շտկմանն ուղղված գործիքակազմ, 3. մասնագիտական գրականության և տարբեր հեղինակների կողմից կատարված վերլուծությունների համադրման արդյունքում վեր հանված ներդրումային գրավչության վրա ազդող 30 գործոններից բաղկացած համախմբի այն գործոնների շտկմանն ուղղված գործիքակազմ, որոնց մասով Հայաստանը զիջում էր հարևան և ԵԱՏՄ երկրներին:
- Բացահայտվել են ՀՀ-ում ներդրումային գրավչություն և ներդրումային ներուժ ունեցող ոլորտները՝ 4 մեթոդաբանությունների համադրման հիման վրա՝ փաստաթղթային վերլուծություն, պետական կառավարման համակարգում անցկացված սոցիոլոգիական հարցումներ, արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ոլորտների բացահայտում և ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի համեմատական վերլուծություն:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Ատենախոսությունում ստացվել են ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող դրույթներ: Ատենախոսության տեսական հիմնադրույթները կարող են կիրառվել այլ հետազոտողների կողմից, ինչպես նաև օգտագործվել ներդրումների ներգրավման առարկայական ծրագրում, իսկ կիրառական նշանակության դրույթների հասցեատերը հիմնականում ՀՀ Կառավարությունն է: Մշակված գործիքակազմը կարող է նպաստել Հայաստանում վարվող ներդրումային քաղաքականության բարելավմանը:
Ատենախոսության արդյունքների հրապարակումը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու գիտա-գործնական նշանակության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփվել են հեղինակի կողմից հրապարակված 7 գիտական հոդվածներում, ինչպես նաև քննարկվել են միջազգային գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն շարադրված է 127 մեքենագիր էջի վրա՝ առանց հավելվածի, պարունակում է 36 գծապատկեր, 20 աղյուսակ:

Ներածությունում ներկայացվում են ատենախոսության թեմայի արդիականությունը և հետազոտության իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկներ, ձևակերպվում են հետազոտության նպատակը և խնդիրները, հստակեցվում են հետազոտության օբյեկտը և առարկան, համառոտ ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթ պարունակող դրույթները, մեկնաբանվում է դրանց գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվում է արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Ներդրումների ներգրավման տեսական հիմնադրույթները» գլխում համակարգված կերպով ներկայացվում են ներդրումների ներգրավման վերաբերյալ առաջատար տեսությունները, ինչպես նաև ներդրումների ներգրավման և ներդրումային դաշտի գրավչության վրա ազդող հիմնական գործոնները բացահայտող վերլուծություններ: Համաձայն Օքսֆորդի տնտեսական բառարանի՝ օտարերկրյա ուղղակի ներդրումը մի երկրի տնտեսվարող սուբյեկտների կողմից մեկ այլ երկրում ներդրում կատարելու գործողությունն է, որը հնարավորություն է տալիս տվյալ տնտեսական սուբյեկտին վերահսկողություն ունենալ այն ձեռնարկության գործունեությանը, որում կատարել է ներդրումը[1]: Գրեթե նույն կերպ է սահմանում ՕՈՒՆ-ը նաև Արժույթի միջազգային հիմնադրամը՝ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության մեջ և ՏՀԶԿ-ն[2]: Իսկ օտարերկրյա պորտֆելային ներդրումների պարագայում ներդրողը չի ստանում տվյալ կազմակերպության ակտիվների նկատմամբ ուղղակի սեփականություն[3]: Ուստիև այս սահմանումից կարող ենք եզրակացնել, որ պորտֆելային ներդրումների նպատակը միայն շահույթի ստացումն է:

Մասնագիտական գրականությունն ուսումնասիրելով[4] ՝ ներդրումների ներգրավման տեսությունները կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորումներով՝ 1. Ներքինացման (internaliztion) և շուկայի անկատարության տեսություն(ՄակԴուգալ, Հայմեր, Կինդլբերգ), 2. Ապրանքի արտադրության կենսացիկլի տեսություն(Վեռնոն), 3. Միջազգային կորպորացիաների

---

[1] https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/foreign-direct-investment վերջին մուտքը՝ 03. 03. 2022թ.

[2] IMF, Balance of Payments and International Investment Position Manual, Sixth Edition (BPM6), 2009, p. 100
OECD Benchmark Definition of Foreign Direct Investment, 4th ed, 2008, p. 17

[3] https://www.investopedia.com/terms/f/foreign-portfolio-investment-fpi.asp

[4] Осеи Д. Д., ОБЗОР ТЕОРИИ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ (ПИИ), Вестник Ростовского государственного экономического университета (РИНХ), 2016 № 2 (54), стр.196-202, Marandu Edward E. , Ditshweu Tebo, An Overview of the Key Theories of Foreign Direct Investment: The Way Forward, Advances in Social Sciences Research Journal – Vol.5, No.12, 2018, p. 30-39, DoI:10.14738/assrj.512.5741.
Makoni Patricia Lindelwa, AN EXTENSIVE EXPLORATION OF THEORIES OF FOREIGN DIRECT INVESTMENT, Risk governance & control: financial markets & institutions / Volume 5, Issue 2, 2015, p.77-83
Musabeh A., MAIN THEORIES OF FOREIGN DIRECT INVESTMENT,
Denisia Vintila, Foreign Direct Investment Theories: An Overview of the Main FDI Theories, European Journal of Interdisciplinary Studies, Volume 2, Issue 2, December 2010, p.104-110,
Nayak, Dinkar; Choudhury, Rahul N. (2014) : A selective review of foreign direct investment theories, ARTNeT Working Paper Series, No. 143, Asia-Pacific Research and Training Network on Trade (ARTNeT), Bangkok,

տեխնոլոգիական տեսություն(Գելբրեյթ), 4. Օլիգոպոլիայի և ներդրումների ներգրավման տեսություն(Կնիկերբոկեր), 5. Թռչող սագերի տեսություն(Ակամացու, Կոջիմա, Օզավա), 6. Էկլեկտիկ տեսություն(Դաննինգ), 7. Ներդրումների զարգացման ուղիների տեսություն(Դաննինգ,Նարուլա, Մոհապատրա, Գոպալասվամի), 8. Արժութային փոխարժեքի և շուկայի անկատարության տեսություն(Ալիբեր, Իտագակի, Կուշման), 9. ՕՈՒՆ և մրցակցային առավելությունների տեսություն(Պորտեր), 10. Նեոդասական տեսություններ(Կիմ, Էկպու), 11. Քեյնսյան տեսություն(Քեյնս):

Մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ են վերլուծությունները, որոնք նպատակ ունեն պարզելու այս կամ այն գործոնի ազդեցությունը երկրի ներդրումային միջավայրի, ներդրումային իմիջի և ներդրումների ներգրավման վրա: Տվյալ խնդրի համակողմանի մեկնաբանման նպատակով՝ ուսումնասիրվել են ոչ միայն առանձին էմպիրիկ վերլուծություններ, այլև այն հեղինակների աշխատությունները, որոնք ամփոփ կերպով ներկայացրել են ներդրումային միջավայրի վրա այս կամ այն գործոնի ազդեցությունը բնութագրող գիտական վերլուծությունները: Ներդրումային միջավայրի վրա ինստիտուցիոնալ գործոնների ազդեցությունը մեկնաբանել են Հելեն Բարնարդն ու Ջոն Լուիզը, Քրիստինա Սակալին, Ալան Բեվանը, Սոլ Էստրինը և Կլաուս Մեյերը, Բոնի Բուխանանը, Քուան Լին և Մինակշի Լիշին և այլոք, իսկ մի շարք տնտեսագետներ ամփոփել են ավելի քան 50 հետազոտություններ՝ բացահայտելու համար այս կամ այն գործոնի դերը ներդրումների ներգրավման հարցում:

Այսպիսով, մեր կողմից կատարված վերլուծության հիման վրա որպես ներդրումների ներգրավման վրա ամենաշատն ազդող գործոններ առանձնացվել է 30 գործոններից բաղկացած հետևյալ համախումբը.

Ինստիտուցիոնալ 11 գործոններ՝ քաղաքական կայունության մակարդակ, պետական կառավարման արդյունավետություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, դատարանների անաչառություն կամ օրենքի գերակայություն, կոռուպցիայի ազատության ինդեքս, տնտեսական ազատության ինդեքս, գործարարության իրականացման համաթիվ, ներդրումային ռիսկերի առկայությունը (որպես ցուցանիշներ կդիտարկվեն հետևյալները՝ ներդրումների ազատության ինդեքս, բիզնեսի ազատության ինդեքս, ֆինանսական ազատության ինդեքս, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքս),

Տնտեսական 14 գործոններ՝ ՀՆԱ-ի աճ, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ, արտահանման ծավալ, առկա ֆինանսական ռեսուրսներ (որպես ցուցանիշ կդիտարկվի վարկի տոկոսադրույքը), գործազրկության մակարդակ, տնտեսության բացվածություն, արտահանման մեջ բարձր տեխնոլոգիատար ապրանքների տեսակարար կշիռը, գնաճ, շուկայի չափ (որպես ցուցանիշ կդիտարկվի բնակչության թվաքանակը), այլ տնտեսական ծախսեր (որպես ցուցանիշ կդիտարկվի՝ Արտահանմանն առնչվող մաքսային և այլ ծախսերը, Արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը, ներմուծմանն առնչվող մաքսային և այլ ծախսերը, Ներմուծման փաստաթղթավորման հետ

կապված ծախսը), բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակ,

Սոցիալ-ժողովրդագրական 5 գործոններ՝ բնակչության աճը, աղքատության մակարդակը, բարձրագույն կրթությամբ աշխատուժի տեսակարար կշիռ ընդհանուր աշխատուժի մեջ, համացանցի օգտատերերի քանակ (% 100 մարդու հաշվով), մարդկային զարգացման ինդեքս:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ներդրումների ներգրավման հիմնախնդիրները» գլխում ուսումնասիրվում է ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքը և հաշվարկվում է ՕՈՒՆ ներհոսքի ազդեցությունը ՀՀ ՀՆԱ-ի վրա, ինչպես նաև նախորդ գլխում առանձնացված 30 ցուցանիշների համախմբի հիման վրա համեմատական վերլուծության են ենթարկվում ՀՀ, հարևան և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրերը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ ներդրումների ներգրավումը անկախացման տարիներից մինչ օրս չի գրանցել որևէ հստակ պարբերականություն. օտարերկրյա ներդրումները ՀՀ-ում կատարվում են կամայական պարբերականությամբ: Բացի այդ ՕՈՒՆ ներհոսքը Հայաստանում ունի հստակ ընդգծված յուրահատկություն՝ օտարերկրյա ներդրումները թե՛ ոլորտային առումով և թե՛ ներդրող երկրների կառուցվածքով զգալի կենտրոնցված է: ՀՀ ՕՈՒՆ դինամիկան պատկերված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. ՀՀ ՕՈՒՆ դինամիկան 2010-2021թթ., մլն. դրամ

2021թ. պատկերը հետևյալն է. ՀՀ ՕՈՒՆ զուտ ներհոսքի ընդհանուր ծավալում 5% և ավելի տեսակարար կշիռ ունեն ՌԴ-ն՝ 52%, Ֆրանսիան՝ 9%, Գերմանիան՝ 6%, ուստի պետք է փաստենք, որ դիտարկվող ժամանակահատվածում 5%-ից ավելի տեսակարար կշիռ ունեցող երկրների աշխարհագրությունը նվազել է: Իսկ ահա 1%-ից ավել տեսակարար կշիռ ունեցող երկրների աշխարհագրությունն ընդլայնվել է՝ Արգենտինա, Կիպրոս, Հունաստան, Լիբանան, Միացյալ Թագավորություն, Լյուքսեմբուրգ, ԱՄՆ, Շվեյցարիա, Ջերսի:

Ըստ ոլորտային բաշխման պատկերը հետևյալն է. 2021թ. 1%-ից ավելի ՕՈՒՆ ներհոսք ապահովվել է հետևյալ ոլորտներում՝ բուսաբուծության և անասնաբուծություն՝ 3%, մետաղական հանքաքարի արդյունահանում՝ 51%, խմիչքների արտադրություն՝ 2%, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 19%, քաղաքացիական շինարարություն՝ 5%, օդային

տրանսպորտ՝ 8%, կացության կազմակերպում՝ 5%, անշարժ գույք՝ 13%[5]:

Ներդրումների ներգրավման արդյունավետ ռազմավարություն մշակելու նպատակով նախ անհրաժեշտ է հասկանալ՝ արդյոք ներդրումները զգալի ազդեցություն են ունենում տվյալ տնտեսության զարգացման վրա: Այդ պատճառով մենք գնահատել ենք ՀՀ-ում ՕՈՒՆ ազդեցությունը ՀՆԱ աճի վրա՝ կիրառելով էկոնոմետրիկ մոդել: Մոդելի կառուցման նպատակով օգտագործել ենք 2010-2020թթ. եռամսյակային տվյալները՝ արտահայտված մլն դոլարով, դիտարկումների թիվը 44 է: Մոդելի գնահատումը կատարվել է փոքրագույն քառակուսիների եղանակով (ՓՔԵ)՝ օգտագործելով Eviews 4 ծրագրային փաթեթը:

Գնահատված մոդելի արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը.

DGDP(t)= 8.043+6.78*DEXPORT(t)+1.52*DFDI(t) (1)

Ռեգրեսիոն (1) հավասարումից հետևում է, որ այլ հավասար պայմաններում ՀՀ արտահանման աճի 1 միավոր փոփոխությունը նպաստում է ՀՀ ՀՆԱ-ի աճի 6.78 միավորով փոփոխության, իսկ ՕՈՒՆ աճի 1 միավոր փոփոխությունը նպաստում է ՀՆԱ-ի աճի 1.52 միավոր փոփոխության: Մեր կողմից ստուգվել է նաև ՕՈՒՆ-ի և ՀՆԱ-ի միջև Գրենջերպատճառականության կապի առկայությունը: Արդյունքում ստացվել է, որ պատճառական կապ գոյություն ունի նաև տվյալ ժամանակահատվածի ՀՆԱ-ի աճի և 6 ամիս առաջ ՕՈՒՆ ներհոսքի աճի միջև:

Ինչպես արդեն նշել ենք՝ ատենախոսության նախորդ գլխում տարբեր վերլուծությունների հիման վրա մեր կողմից ներկայացվել է երկրի ներդրումային գրավչության վրա ազդող 30 գործոնների համախումբ: Այդ գործոնների հիման վրա մեր կողմից համեմատական վերլուծության է ենթարկվել ՀՀ, հարևան և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրերը: Արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը. ներդրումային միջավայրի գրավչության վրա ազդող դիտարկվող 30 գործոնների տեսանկյունից Հայաստանն ավելի լավ դիրքում է գտնվում.

- հարևան երկրներից Իրանի և Ադրբեջանի նկատմամբ՝ 16, Թուրքիայի նկատմամբ՝ 13, Վրաստանի նկատմամբ՝ 8 գործոններով,
- ԵԱՏՄ երկրներից Ղրղզստանի նկատմամբ՝ 16, ՌԴ-ի նկատմամբ՝ 14, Բելառուսի նկատմամբ՝ 12 և Ղազախստանի նկատմամբ՝ 11 գործոններով:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումների ներգրավման հնարավորությունները հետպատերազմյան Հայաստանում» գլխում բացահայտվել են ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում, ինչպես նաև մշակվել են ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլեր:

Ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտման համար մեր կողմից իրականացվել է հետևյալ 4 քայլից բաղկացած մոտեցումը՝

1. Փաստաթղթային վերլուծության միջոցով բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում,
2. Պատկան մարմինների պատասխանատուների հետ հարցման միջոցով բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում,

[5] ՎԿ էլեկտրոնային բազայի տվյալների՝ https://www.armstat.am/am/?nid=14 օտարերկրյա ներդրումներ

3. Բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում՝ հիմնվելով այդ ոլորտների արտահանման բացահայտ համեմատական առավելության ինդեքսի վրա,
4. Բացահայտել ՀՀ ներդրումների համար նպաստավոր ոլորտները՝ ըստ ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի (FDI Regulatory Restrictiveness Index)[6]:

Փաստաթղթային ստուգման արդյունքում պետք է փաստել, որ նախկինում մշակված 7 ոլորտների զարգացման ռազմավարությունների չկատարման կամ թերի կատարման արդյունքում ներկայում այդ ոլորտները դեռևս բավարար չափով գրավիչ չեն ներդրումների համար, իսկ գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը դեռ նոր է մշակվել:

Մեր կողմից պետական գերատեսչություններում անցկացված հարցումների հիման վրա փորձել ենք պարզել, թե որոնք են տվյալ պետական գերատեսչության համար հեռանկարային զարգացման ուղղությունները առաջիկա 3, 5 և 10 տարիների կտրվածքով: Ամփոփ ներկայացնենք ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք պետական գերատեսչությունները դիտարկում են որպես զարգացման գերակայություն առաջիկա 10 տարվա համար՝ նշելով, որ ներկայում դրանց զարգացմանն ուղղված ռազմավարությունները մշակման փուլում են և նախատեսվելու են բազմաթիվ արտոնություններ տվյալ ոլորտում ներդրում կատարող տնտեսվարող սուբյեկտների համար.

- ***Գյուղատնտեսություն***- առկա է զարգացման ռազմավարություն, դրանում նախանշված քայլերը ներառված են Կառավարության գործունեության ծրագրում, ունի արտահանման պոտենցիալ,
- ***Մետալուրգիա***- զարգացման ռազամավարությունը գտնվում է մշակման փուլում, ներառված է Կառավարության ծրագրում, ունի արտահանման պոտենցիալ,
- ***Քիմիական արդյունաբերություն***- զարգացման ռազամավարությունը գտնվում է մշակման փուլում, ներառված է Կառավարության ծրագրում, ունի արտահանման պոտենցիալ,
- ***Դեղագործություն***- զարգացման ռազամավարությունը գտնվում է մշակման փուլում, ներառված է Կառավարության ծրագրում, ունի արտահանման պոտենցիալ,
- ***Ոսկերչություն***- զարգացման ռազամավարությունը գտնվում է մշակման փուլում, ներառված է Կառավարության ծրագրում, ունի արտահանման պոտենցիալ,
- ***Ադամանդագործություն***- զարգացման ռազամավարությունը գտնվում է մշակման փուլում, ներառված է Կառավարության ծրագրում, ունի արտահանման պոտենցիալ,
- Էներգետիկա, հատկապես՝ ***արևային էներգիայի արտադրություն և արևային պանելների արտադրություն***- փաստաթղթավորված չէ, ներառված է կառավարության ծրագրում, ունի արտահանման պոտենցիալ,
- SS և հատկապես շեշտադրված՝ ***արհեստական բանականություն,***

[6] https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX

ռոբոտաշինություն, քվանտային ինժեներիա- ներկայում փաստաթղթավորված չէ, բայց անհրաժեշտ է պետության մի շարք գերակայությունների զարգացման համար, ունի արտահանման պոտենցիալ:



Գծապատկեր 2. Հարցման արդյունքում բացահայտված ՀՀ առաջիկա 10 տարիների համար գերակա ոլորտների փաստաթղթավորվածությունը և արտահանման պոտենցիալը[7]

Այսպիսով, վերոնշյալ 8 ոլորտները՝ իրենց ենթոլորտներով առաջիկա 10 տարիների ընթացքում կհանդիսանան ներդրումների ներգրավման համար գրավիչ և հիմնական ներդրումներ կլանող ոլորտները, իսկ դրանցում ներդրում իրականացվող տնտեվարող սուբյեկտները կստանան բազմաթիվ արտոնություններ: Նշենք, որ այս ոլորտները թերևս հնարավոր չէր լինի բացահայտել որևէ այլ վերլուծության միջոցով, քանի որ դրանց գերակայությունն դեռևս փաստաթղթավորված չէ՝ բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի, ընդ որում՝ բոլոր ոլորտներն ունեն արտահանման պոտենցիալ՝ գծապատկեր 2:

Բացահայտ համեմատական առավելության ինդեքսը մշակվել է Բելա Բալասսայի կողմից՝ որպես շարունակություն Ռիկարդոյի համեմատական առավելությունների տեսության: Այս ինդեքսը ցույց է տալիս որևէ երկրի որևէ ոլորտի արտահանման համեմատական առավելությունն աշխարհում, առանձին երկրի կամ ինտեգրացիոն միավորման շուկայում:

Ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը հետևյալն է $ԲՀԱ_{ա}=(x_{ա}X)/(x_{աw}/X_{w})$, որտեղ՝ $x_{ա}$-ն դիտարկվող երկրում ա-րդ ճյուղի արտահանումն է դեպի նշված երկրի, ինտեգրացիոն միավորման կամ համաշխարհային շուկա, X-ը՝ դիտարկվող երկրի ընդհանուր արտահանումը դեպի նույն շուկա, $x_{աw}$-ն՝ ա-րդ ճյուղի համաշխարհային արտահանումն է դեպի նշված երկրի, ինտեգրացիոն միավորման կամ համաշխարհային շուկա, իսկ Xw-ն ընդհանուր համաշխարհային արտահանումը դեպի դեպի նշված երկրի, ինտեգրացիոն միավորման կամ համաշխարհային շուկա [8]: Այն դեպքում, երբ ԲՀԱ-ն տվյալ ոլորտի համար գրանցում է «1»-ից մեծ արժեք, կարող ենք ասել, որ երկիրը տվյալ ոլորտի արտահանման համեմատական առավելություն ունի:

Այս վերլուծության համար մեր կողմից դիտարկվել է տվյալ ինդեքսը 2015-2021թթ. Հայաստանի, հարևան երկրներից Վրաստանի և Իրանի, ինչպես նաև ԵԱՏՄ երկրների համար:

[7] Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից՝ ըստ հարցման արդյունքների

[8] Balassa B., Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, The Manchester School, Vol. 33, May, 1965, pp. 99-123

Այս մեթոդաբանությամբ ներդրումների համար գրավիչ ոլորտները բացահայտելիս անհրաժեշտ է հաշվի առնել մեկ նրբություն ևս՝ 2022թ.-ից Հայաստանն այլևս չի կարող օգտվել GSP+ համակարգից, որից օգտվում էր մինչ այժմ, սակայն փոխարենը կշարունակի օգտվել GSP համակարգից, որը հնարավորություն է տալիս արտոնյալ պայմաններով արտահանում իրականացնել ԱՄՆ-ի, Կանադայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի և Նորվեգիայի շուկաներ[9], ուստի կդիտարկենք ՀՀ արտահանման համեմատական առավելությունները այս երկրների շուկաներում ևս:

Նախ անդրադառնանք ՀՀ արտահանման ԲՀԱ-ին՝ ընդհանուր գծերով:

- Կենդանական, բուսական ծագման արտադրանքների, պատրաստի սննդի, հանքահումքային մթերքների, մանածագործական իրերի և իրեր քարից, գիպսից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից արտադրատեսակների արտահանման բացահայտ համեմատական առավելություն ՀՀ-ն դիտարկվող ողջ ժամանակահատվածում ունեցել կամ ձեռք է բերել համաշխարհային և ԵԱՏՄ շուկաներում,
- պատրաստի սննդի և իրեր քարից, գիպսից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից արտադրատեսակների արտահանման բացահայտ համեմատական առավելություն ՀՀ-ն դիտարկվող ողջ ժամանակահատվածում ունեցել կամ ձեռք է բերել ԱՄՆ-ի և Կանադայի շուկաներում,
- պատրաստի սննդի արտահանման ԲՀԱ ՀՀ-ն ողջ ժամանակահատվածում ունեցել է նաև Ճապոնիայի շուկայում:

Սա նշանակում է, որ վերոնշյալ ապրանքների արտադրության ոլորտները եղել և մնում են գրավիչ ներդրումների համար:

ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսը հաշվարկվում է ՏՀԶԿ(OECD)-ի կողմից՝ յուրաքանչյուր երկրի թվով 22 ոլորտների և ենթաոլորտների համար: Ինդեքսը տատանվում է (0,1) միջակայքում, որտեղ «0» արժեքը նշանակում է, որ տվյալ երկրի տվյալ ոլորտը բաց է ՕՈՒՆ ներգրավման համար և չի պարունակում կանոնակարգման սահմանափակումներ, իսկ «1»-ը՝ հակառակը[10]:

Համաձայն այս ցուցանիշի՝ Հայաստանում ՕՈՒՆ ներգրավման համար ամենամեծ կանոնակարգման սահմանափակումներ առկա են օդային տրանսպորտի, հեռուստա- և ռադիոհեռարձակման ոլորտներում, դրան հաջորդում են տեղեկատվությունն ու կապը, տրանսպորտը, հաշվապահությունն ու աուդիտը և բիզնես ծառայությունների մատուցումը՝ ըստ սահմանափակումների նվազման: Մյուս բոլոր ոլորտները՝ համաձայն այս ինդեքսի զերծ են սահմանափակումներից: Համեմատական վերլուծելով նաև ՀՀ դիրքը ըստ այս ցուցանիշի հարևան և ԵԱՏՄ անդամ-երկրների հետ՝ կստանանք հետևյալ պատկերը.

- Ընդհանուր ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակումների ինդեքսով Հայաստանը զիջում է միայն Վրաստանին,
- Հայաստանը դիտարկվող երկրների շարքում միակն է, որ զերծ է ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակումներից անշարժ գույքի ոլորտում, ուստի

[9] https://finport.am/full_news.php?id=45052&lang=2 վերջին մուտքը՝ 12. 11. 2022թ.
[10] https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX

բոլոր դիտարկվող երկրների համար կարող է գրավիչ լինել ՀՀ անշարժ գույքի ոլորտում ներդրումների իրականացումը,

- ԵԱՏՄ երկրների շարքում Հայաստանն ամենաազատականն է հետևյալ ոլորտներում՝ գյուղատնտեսության և անտառային տնտեսության, ձկնաբուծության, հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման, մշակող արդյունաբերության՝ ընդհանրապես, և սննդի, քիմիական արդյունաբերությունների՝ մասնավորապես, մետաղների և դրանցից իրերի արտադրության, սարքավորումների արտադրության, տրանսպորտային միջոցների արտադրության, էլեկտրաէներգիայի, շինարարության, առևտրի, հյուրանոցային և ռեստորանային տնտեսության, տեղեկատվության և կապի, հեռահաղորդակցության, բոլոր տեսակի ֆինանսական ծառայությունների, բիզնես ծառայությունների, ճարտարապետության և ինժեներիայի ոլորտներում ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակումներից, ուստի կարող է գրավիչ լինել նշյալ ոլորտներում ՀՀ-ում ներդրումների իրականացումը ի համեմատ ԵԱՏՄ այլ երկրների,
- Հարևան երկրներից Հայաստանն ավելի ազատական է Վրաստանի համեմատ անտառային տնտեսության և ձկնաբուծության ոլորտներում, զիջում է Վրաստանին միայն բիզնեսի ծառայություններ, հաշվապահություն և աուդիտ, տեղեկատվության և կապի ու տրանսպորտի ոլորտներում,
- Ադրբեջանին զիջում է միայն հաշվապահություն և աուդիտ, տրանսպորտ և հատկապես՝ օդային տրանսպորտի ոլորտներում, ուստի մյուս ոլորտներում ներդրում կատարելիս Ադրբեջանի և Հայաստանի միջև ներդրողը կարող է առաջնայնությունը տալ Հայաստանին:
- գրեթե բոլոր ոլորտներում Հայաստանն ու Թուրքիան ունեն ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակումների նույն ազատությունը, Թուրքիային Հայաստանը զիջում է միայն տեղեկատվության և կապի ոլորտում, իսկ հանքարդյունաբերության և բաց հանքերի շահագործման, տրանսպորտի, բիզնես ծառայությունների, հաշվապահական և աուդիտի ծառայությունների ոլորտներում ներդրումներ կատարողները Հայաստան/Թուրքիա այլընտրանքներից կարող են որոշում կայացնել հօգուտ Հայաստանի, քանի որ տվյալ ոլորտների ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակումներն ավելի փոքր են Հայաստանում:

Այդուհանդերձ, ոլորտների առկայությունը ինքնին չի կարող նպաստել ներդրումների ներհոսքին, հատկապես՝ հետպատերազմյան ժամանակահատվածում: Ուստի փորձ է արվել մշակել նախկինում արձանագրված խնդիրների լուծման ուղիներ և առաջարկել ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ գործիքակազմ.

1. Կարծում ենք փոքր ներքին շուկայի առկայությունից բխող հիմնախնդիրները հնարավոր է լուծել՝ ներդրողներին հստակ ներկայացնելով, թե ՀՀ տնտեսության որ ոլորտում իրականացված ներդրումը կարող է արդյունավետ լինել արտաքին շուկաներ դուրս գալու տեսանկյունից: Տվյալ պարագայում անհրաժեշտ է հստակ հաշվարկների միջոցով օտարերկրյա ներդրողներին ներկայացնել ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք մշտապես ունեցել են արտահանման համեմատական կամ մրցակցային առավելություն, ինչպես

նաև այն ոլորտները, որոնք կարճաժամկետ կամ միջնաժամկետ ժամանակահատվածում կարող են շահավետ դառնալ արտահանման տեսանկյունից՝ մեկնաբանելով այդ ոլորտներից յուրաքանչյուրում ներդրումների իրականացման առանձնահատկությունները:

2. Ներդրումների ներգրավման ռազմավարության մեթոդաբանական հաջորդ սկզբունքը պետք է լինի ներդրողների մոտ կանխատեսելիության գիտակցության ամրապնդումը: Մինչ օրս ՀՀ-ում ներդրում իրականացնող անձիք մշտապես հանդիպել են անկանխատեսելի կերպով տնտեսական փոփոխությունների իրականացման խնդրին՝ հարկային օրենսդրության մշտական փոփոխություն, ինտեգրացիոն միավորումների անդամակցության անկանխատեսելիություն և այլն: Հետճգնաժամային իրավիճակների հաղթահարման պարագայում նման մոտեցումը բնավ չի կարող խրախուսել ներդրումների ներհոսք: Այդ պատճառով անհրաժեշտ է մշակել երկրի զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, որն անշեղորեն կկատարեն բոլոր նոր ձևավորվող կառավարությունները՝ ենթարկելով միայն իրավիճակային շտկումների: Զարգացման նման ուղիով անցել է Սինգապուրի տնտեսությունը, որում անշեղորեն կատարվել է նախապես մշակված երկարաժամկետ զարգացման ռազմավարությունը՝ անկախ այն իրականացնող անձերի փոփոխությունից: Դեռևս 2015 թ. ՀՀ Կառավարության հոկտեմբերի 8-ի նիստի N 45 արձանագրային որոշման համաձայն հավանություն է տրվել ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցին[11]: Համաձայն այդ ժամանակացույցի մինչև 2020թ. դեկտեմբեր արդեն իսկ պետք է մշակված լիներ ՀՀ ՕՈՒՆ ներգրավման ռազմավարություն, որն առկա չէ:

3. Ներդրումների ներգրավման ռազմավարության մշակման համար նաև անհրաժեշտ է համեմատական վերլուծության ենթարկել ՀՀ և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրերը: Տվյալ պարագայում համարվում է, որ Հայաստանը որոշակիորեն չեզոքացրել է փոքր ներքին սպառման շուկայի հետ կապված զսպող գործոնը՝ անդամակցելով ԵԱՏՄ-ին: Ուստի անհրաժեշտ է հստակ պատկերացում կազմել ԵԱՏՄ մյուս երկրների համեմատ ՀՀ ներդրումային միջավայրի առավելությունների և թերությունների մասին, որից հետո առկա առավելությունները պետք է կարողանալ հասցնել ներդրողների թիրախային խմբերին, իսկ թերությունների շտկմանն ուղղված քայլեր անհրաժեշտ է ձեռնարկել օր առաջ:

4. Մեթոդաբանության տեսանկյունից մյուս կարևոր քայլը իրավիճակի ճիշտ գնահատումն է: Միայն այս պարագայում հնարավոր կլինի արդյունավետ քաղաքականություն մշակել և կիրարկել:

5. Եվ ի վերջո մինչ օրս Հայաստանի անկախության երեսնամյա ժամանակահատվածում գոյություն ունեցող ևս մի կարևոր մեթոդաբանական սխալ կա՝ պետական մարմինների գործառույթների կրկնությունը: Այս երևույթի վերացման դեպքում յուրաքանչյուր պատկան մարմին առավել պատասխանատու կմոտենա իրեն լիազորված գործառույթների կատարմանը, իսկ պետական գումարներն էլ կծախսվեն արդյունավետ:

[11] http://www.irtek.am/views/act.aspx?aid=82676 վերջին մուտքը 10. 10. 2022թ.

Ներկայում ՀՀ-ում վարվող ներդրումների ներգրավման քաղաքականության շրջանակներում մեր կողմից արձանագրվել են հետևյալ խնդիրները.

1. ՀՀ ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտն է 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, որը հնացած է և ունի արդիականացման կարիք:
2. ՀՀ-ում գործող 4 ազատ տնտեսական գոտիներից «Մերիդիան» և «Մեղրի» ազատ տնտեսական գոտիների էլեկտրոնային կայքերը գոյություն չունեն, որոնց միջոցով ներդրողը կկարողանար ամբողջական տեղեկատվություն ստանալ այդ տնտեսական գոտիներում գործելու համար, իսկ «Ալյանսի» պարագայում բացակայում է հայալեզու տեղեկատվությունը: Կարծում ենք պետականորեն պետք է ստեղծվեն լծակներ, որոնք կպարտավորեցնեն ԱՏԳ կազմակերպիչներին ապահովել եռալեզու կայքի առկայություն՝ ամբողջական հասանելի տեղեկատվությամբ:
3. Գոյություն ունի միասնական էլեկտրոնային հարթակ[12], որում ներկայացված են ՀՀ ներդրումային ընթացակարգերը՝ հնարավորինս պարզ և թափանցիկ[13]: Այդուհանդերձ տվյալ հարթակը թերևս քիչ է հայտնի օտարերկրյա ներդրողներին և կարծում ենք անհրաժեշտություն կա հարթակի առաջմղման՝ միջազգային տարբեր ցուցահանդեսների ժամանակ կազմակերպվող քննարկումների, ՀՀ առևտրային ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային հեռուստաալիքներով պատվիրվող գովազդների միջոցով:
4. Գոյություն ունի ներդրողների աջակցության «մեկ պատուհան»[14], որի կայքը փաստացի չի գործում: «Մեկ պատուհանի» հաջող գործունեության օրինակներն աշխարհում բազմաթիվ են՝ սկսած հարևան Վրաստանից մինչև այնպիսի զարգացած երկրներ, ինչպիսիք են Գերմանիան, Սինգապուրը և այլն: Նշված երկրների փորձը հաշվի առնելով՝ առաջարկում ենք «Մեկ պատուհանի» գաղափարն իրականացնել հետևյալ կերպ՝ այն պետք է ունենա համապատասխան կայք՝ կցված սոցիալական հարթակների էջերով, առցանց նամակագրության, զանգի և պաշտոնական նամակագրության հնարավորություն:
5. Նախկինում ՀՀ Տնտեսական զարգացման նախարարության պատվերով մշակվել և ներդրվել էր ՀՀ ներդրումային առցանց հարթակ՝ investmentprojects.am, որն այժմ չի գործում: Ուսումնասիրելով ներդրումային գրավչություն ունեցող թե՛ տարածաշրջանային, և թե՛ այլ երկրների փորձը՝ կարելի է փաստել, որ ներդրումային հարթակի առկայությունն ու արդյունավետ գործունեությունը զգալի ազդեցություն է ունենում ներդրումների ներգրավման վրա: Ուստի այլ երկրների փորձի հիման վրա առաջարկել են ներդրումային հարթակի ստեղծման նախագիծ:

Եվ ի վերջո, մեր կողմից առանձնացված 30 ցուցանիշներից բաղկացած գործոնների համեմատական վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրների լուծման համար մենք մշակել ենք մեխանիզմներ հետևյալ ցուցանիշների մասով ՀՀ դիրքի բարելավման նպատակով՝ պետական

[12] https://www.mineconomy.am/page/1707 վերջին մուտքը 20. 10. 2022թ.
[13] https://armenia.eregulations.org/?l=hy վերջին մուտքը 20. 10. 2022թ.
[14] https://mineconomy.am/page/1456 վերջին մուտքը 20. 10. 2022թ.

կառավարման արդյունավետության ինդեքս, կոռուպցիայից ազատության ինդեքս, գործարարության իրականացման համաթիվ, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն, ՀՆԱ-ի և 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճի տեմպի ավելացում, արտահանման ծավալի ավելացում, արտահանման մեջ բարձր տեխնոլոգիատար ապրանքների տեսակարար կշռի ավելացում, գործազրկության և աղքատության նվազեցում, բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակ:

Ատենախոսության ***«Եզրակացություն»*** բաժնում ամփոփված են հետազոտության հետևյալ հիմնական եզրահանգումները.

ՀՀ օտարերկրյա ներդրումների կառուցվածքի տեսանկյունից խիստ մտահոգիչ է դրա կենտրոնացվածությունը մի քանի երկրների և մի քանի ոլորտների միջև:

- Ներդրումային գրավչության վրա ազդող դիտարկվող 11 ինստիտուցիոնալ ցուցանիշներից Հայաստանի դիրքերը հարևան Ադրբեջանի նկատմամբ ավելի բարենպաստ են 8-ում, Իրանի նկատմամբ՝ բոլոր 11-ում, Վրաստանի նկատմամբ՝ 2-ում, Թուրքիայի նկատմամբ՝ 8-ում: Իսկ ԵԱՏՄ երկրների համեմատ Հայաստանը 11 ցուցանիշներից ավելի լավ վիճակում է գտնվում Բելառուսի համեմատ՝ 10 ցուցանիշով, Ռուսաստանի և Ղրղզստանի համեմատ՝ 9-ով, Ղազախստանի համեմատ՝ 7-ով: Համապատասխանաբար՝ հարևան երկրներից ՀՀ–ն ամենաշատը ըստ ցուցանիշների քանակի զիջում է Վրաստանին՝ 9 ցուցանիշով, իսկ ԵԱՏՄ երկրներից՝ Ղազախստանին՝ 4 ցուցանիշով:
- Դիտարկվող 14 տնտեսական ցուցանիշներից 5-ի, Ադրբեջանի նկատմամբ՝ 6-ի, Թուրքիայի նկատմամբ՝ 3-ի մասով: Իսկ ԵԱՏՄ երկրների շարքում Հայաստանը ներդրումների ներգրավման համար տնտեսական 14 ցուցանիշներից ավելի բարենպաստ դիրք է գրավում Բելառուսի նկատմամբ՝ 3 ցուցանիշով, Ղազախստանի նկատմամբ՝ 4, Ռուսաստանի նկատմամբ՝ 5, Ղրղզստանի նկատմամբ՝ 9 ցուցանիշով:
- Դիտարկվող 5 սոցիալ-ժողովրդագրական ցուցանից Հայաստանը բարենպաստ դիրքում է գտնվում Ադրբեջանի, Ռուսաստանի համեմատությամբ միայն 1-ով, Վրաստանի, Թուրքիայի և Իրանի համեմատության՝ 2-ով:
- Էկոնոմետրիկ վերլուծությունը ցույց տվեց, որ ՕՌԻՆ աճի 1 միավոր փոփոխությունը նպաստում է ՀՀ ՀՆԱ-ի աճի 1.52 միավոր փոփոխության:
- Բացահայտվել է նաև պատճառական կապի առկայությունը ՀՀ ՕՌԻՆ-ի և ՀՆԱ-ի միջև: Ըստ այդմ՝ պատճառական կապ գոյություն ունի տվյալ ժամանակահատվածի ՀՆԱ-ի աճի և 6 ամիս առաջ ՕՌԻՆ ներհոսքի աճի միջև:
- Փատաթղթային սուգման արդյունքում ի հայտ եկան մի շարք խնդիրներ: Նախ պարզ դարձավ, որ ներկայում մշակված և գործունեության մեջ դրված ոլորտային զարգացման ռազմավարություն առկա է միայն գյուղատնտեսության համար, իսկ նախկինում մշակված 7 ոլորտների զարգացման ռազմավարությունների չկատարման կամ թերի կատարման արդյունքում տվյալ ոլորտները ներկայում ևս գրավիչ չեն ներդրողների համար:
- Պատկան մարմինների պատասխանատուների հետ հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ըստ ներկայում վարվող պետական քաղաքականության՝

Հայաստանի համար առաջիկա 10 տարիների կտրվածքով զարգացման գերակայություն և ըստ այդմ նաև՝ ներդրումների համար նպաստավոր ոլորտներ կլինեն գյուղատնտեսությունը, մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, դեղագործությունը, ոսկերչությունը, ադամանդագործությունը, արևային էներգիայի ոլորտը, մասնավորապես՝ պանելների արտադրությունը և SS-ն, մասնավորապես՝ արհեստական բանականության, ռոբոտաշինության, քվանտային ինժեներիայի ուղղությունները:

- Բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հիման վրա մեր կողմից բացահայտվել են ներդրումային գրավչություն ունեցող արտադրության հետևյալ ոլորտները. Կենդանական ծագման արտադրանք, Բուսական ծագման արտադրանք, Պատրաստի սննդի արտադրանք, Հանքահումքային մթերք, Մանածագործական իրեր, Իրեր քարից, գիպսից, ցեմենտից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից, Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից, Մեքենաներ և սարքավորումներ:
- Մշակվել է 5 քայլից բաղկացած մեթոդական ցուցումների գործիքակազմ, ինչպես նաև ՀՀ-ում ներդրումային քաղաքականության իրականացման ընթացքում թույլ տված սխալների և թերացումների շտկմանն ուղղված 5 քայլից բաղկացած գործիքակազմ:
- Ի վերջո անդրադառնալով ՀՀ ներդրումային գրավչության վրա ազդող այն ցուցանիշների վերլուծության ժամանակ արձանագրված խնդիրներին՝ մեր կողմից մշակվել են դրանց բարելավմանն ուղղված հետևյալ մեխանիզմները՝ պետական կառավարման մարմիններում միասնական կառավարման էլեկտրոնային համակարգի մշակում և ներդրում, պետական համակարգում լավագույն կառավարիչների ներառում՝ ապահովելով բարձր աշխատավարձով և բարձր սոցիալական ապահովվածության փաթեթներով, շինարարության թույլտվության ստացման գործընթացում՝ անցում «1 պատուհանի» սկզբունքին, գիտելիքի առևտրայնացման համակարգի ստեղծում, կայուն աճի մոդելի անցում, արտահանման խթանման ողջ գործիքակազմի կիրառում, ռեսուրսատար ոլորտներին տրվող պետական աջակցությունից անցում գիտատար և բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտադրության ոլորտներին պետական աջակցության, գործազրկության և աղքատության նպաստի փոխարինում յուրաքանչյուր անձին օրինական գրանցված ինքնազբաղվածության հնարավորության ստեղծմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ տպագրված աշխատություններում.

1. Գևորգյան Ա.Վ., ՀՀ տնտեսության ներդրումների ներգրավման ռազմավարության մշակման մեթոդաբանությունը, Տարածաշրջան և աշխարհ, հատոր XII, N3, 2021, էջ 132-137:
2. Գևորգյան Ա.Վ., Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա, Տարածաշրջան և աշխարհ, հատոր XII, N6, 2021, էջ 168-171:
3. Հարությունյան Տ.Վ., Գևորգյան Ա.Վ., ՀՀ ՕՈՒՆ վերլուծությունը, Տարածաշրջան և աշխարհ, հատոր XII, N6, 2021, էջ 172-175:
4. Հարությունյան Տ.Վ., Սարգսյան Լ.Ն., Գևորգյան Ա.Վ., Ներդրումների ներգրավման վրա ազդող գործոնները, Հայկական տնտեսագիտական հանդես, N2, 2021, էջ 48-57:
5. Арутюнян Т. В., Саргсян Л. Н., Геворгян А.В., Сферы привлекательные для инвестиций в Армении, XI Международная научно-практическая конференция 17 декабря 2021г., г. Пенза, Наука, образование, инновации: актуальные вопросы и современные аспекты, стр.104-107.
6. Геворгян А.В., Стратегические шаги, необходимые для привлечения инвестиций в РА, IX Международная научно-практическая конференция: актуальные вопросы экономики, 20 декабря 2021г., г. Пенза, стр.108-110.
7. Հարությունյան Տ, Սարգսյան Լ, Գևորգյան Ա, Ներդրումների ներգրավման հնարավորությունները ՀՀ-ում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, 2022 N1, էջ 24-39:

ГЕВОРГЯН АРМИНЕ ВАРДАНОВНА

ПРОБЛЕМЫ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ В ПОСЛЕВОЕННОЙ АРМЕНИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - “Экономика, управление народным хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 26-го майя 2023г. в 15:00 часов на заседании специализированного совета по экономике ВАК РА 015, действующего в Ереванском государственном университете.

Адрес: Ереван, ул. Абовяна 52, 0025

РЕЗЮМЕ

Привлечение инвестиций - неотъемлемая часть внешнеэкономической политики развивающихся стран. Тем не менее, недавние события в Армении вызывают у некоторых экспертов серьезные опасения, что в ближайшее время Армения вряд ли сможет проводить эффективную политику привлечения инвестиций. Однако следует отметить, что Армения - не единственная страна в мировой экономике, пострадавшая от войны. История показывает примеры Японии, Сингапура и других стран, которые пострадали от войны и имели почти полностью разрушенную экономику, но смогли построить растущую экономику благодаря эффективной экономической политике и менее чем за пятьдесят лет стали одними из ведущих стран в мире.

Международный опыт показывает, что страны, переживающие кризис, особенно страны с малой экономикой, обычно могут расти быстрее методом привлечения иностранных инвестиций, так как у них есть нехватка внутренних финансовых ресурсов. Понятно, что помимо проводимой экономической политики, на привлечение инвестиций существенное влияние оказывает политическая и военная ситуация в стране. Однако, как мы уже упоминали, в мире есть и другие страны, которые после войны смогли добиться быстрого роста за счет привлечения инвестиций. Поэтому сейчас очень важно изучить как можно более широкий инструментарий международного опыта по привлечению инвестиций и предложить пути их локализации в Армении, чтобы как можно скорее выйти из кризиса.

Все вышеперечисленные факты подтверждают актуальность выбранной темы.

Целью диссертации является анализ проблем привлечения инвестиций в послевоенную Армению, предложение шагов по повышению инвестиционной привлекательности Республики Армения, как путем определения областей, которые могут быть привлекательными для инвестиций, так и путем разработки инвестиционной политики. Инструментарий.

Научная новизна данного исследования состоит в следующем:

- Выявлен коэффициент влияния прямых иностранных инвестиций на рост ВВП в Республике Армения с помощью регрессионной эконометрической модели, а также показана причинно-следственная связь между прямыми иностранными инвестициями и ВВП. В результате можно констатировать, что изменение притока ПИИ за данный период является причиной изменения ВВП в следующие 6 месяцев, а рост ПИИ на 1 единицу за данный период способствует росту ВВП РА на 1,56.
- Разработаны стратегические шаги, необходимые для привлечения инвестиций в послевоенную Армению, которые состоят из 3 групп: 1. методический инструментарий, который необходимо учитывать при разработке стратегии привлечения инвестиций в Армению, 2. инструментарий для исправления ошибок, допущенных при реализации инвестиционной политики в Республике Армения, 3. Инструментарий, направленный на улучшение тех факторов из группы 30-ти факторов, влияюших на инвстиционную среду, по которым Армения утупала соседних стран и стран ЕАЭС.
- Были определены области с инвестиционной привлекательностью и инвестиционным потенциалом в Армении на основе комбинации 4 методологий: документальный анализ, социологические исследования, проведенные в системе государственного управления, определение областей с выявленными сравнительными преимуществами в экспорте, определение областей инвестиционной привлекательности по индексу нормативных ограничений ПИИ.

GEVORGYAN ARMINE VARDAN

PROBLEMS OF ATTRACTING INVESTMENTS IN POST-WAR ARMENIA

The abstract of the dissertation is submitted for the pursuing Scientific Degree of PhD of Economic Sciences in the Field 08.00.02 “Economy, the Economics of its Spheres and Control”.

The defense of the dissertation will take place on May 26, 2023 at 15:00 at the meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at Yerevan State University.

Address: Yerevan, Abovyan Str. 52, 0025

SUMMARY

Attracting investment is an integral part of developing countries' foreign economic policies. Nevertheless, the recent events in Armenia raise serious concerns among some experts that in the near future Armenia will hardly be able to pursue an effective investment attraction policy. However, it should be noted that Armenia is not the only country in the world economy that has suffered from the war. Till now is known examples of Japan, Singapore and other countries, which suffered from the war and had an almost completely destroyed economy, but were able to build a growing economy due to effective economic policies, and in less than fifty years became one of the world's leading countries.

The best practices show that countries in crisis, especially those with small economies, are usually able to grow faster by attraction of foreign investment due to the scarcity of domestic financial resources. It is clear that in addition to the pursued economic policy, the political and military situation in the country has a significant impact on investment. However, as we have already mentioned, there are other countries in the world that have been able to record rapid growth after the war due to the attraction of investments. That is why it is very important now to study the widest possible toolkit of best practices in attracting investments and to propose ways to localize them in Armenia in order to get out of the crisis as soon as posible.

All the facts above substantiate the topicality of the chosen topic.

The aim of the dissertation is to analyze the problems of attracting investments in post-war Armenia, to propose steps to increase the investment attractiveness of the Republic of Armenia, both by identifying areas, which can be attractive for investment and by developing an investment policy toolkit.

The scientific novelty and main results of the dissertation thesis: The study undertaken within the scopes of works to complete the dissertation thesis, theoretical, methodological and applied results were identified. The main results and concepts supporting the scientific novelty of the dissertation are the following:

- The coefficient of impact of FDI in GDP growth in the Republic of Armenia is

revealed using regression econometric model, as well as the causal relationship between FDI and GDP is shown. As a result, we can state that the change in FDI inflow in the given period is the reason for the change in GDP in the next 6 months, and the growth of the FDI by 1 point in the given period contributes to the growth of the RA GDP by 1.56 points.

- Strategic steps have been developed to attract investments in post-war Armenia, which consist of 3 groups: 1. methodological tools, which must be taken into account to develop a strategy for attracting investments in Armenia, 2 . tools for correcting mistakes made in the implementation of investment policy in the Republic of Armenia, 3. Tools aimed at improving those factors from the group of 30 factors influencing the investment environment, by which Armenia drowned out neighboring countries and the EAEU countries.
- The areas with investment attractiveness and investment potential in Armenia was identified based on a combination of 4 methodologies: documentary analysis, sociological surveys conducted in the public administration system, identification of areas with revealed comparative advantage in export, identification of area of investment attractiveness by FDI Regulatory Restrictiveness Index.